

ՍԱՍՈՒՆ ԱԲԵՂԱ ԶՄՐՈՒԽՏՅԱՆ



Ծնվել է 1954 թ. հոկտեմբերի 10-ին Բեյրութում (Լիբանան): Ավազանի անունն է Գրիգոր: Նախնական կրթությունը ստացել է նախ հայ Ավետարանական և ապա Վահան Թեքեյան վարժարաններում: Այնուհետև իր ուսումը շարունակել է Հ. Բ. Ը. Մ. Հովակիմյան-Մանուկյան Ազգային երկրորդական վարժարանում:

1970 թ., լուսահոգի Տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանի միջնորդությամբ, Սասուն աբեղան ուղևորվում է Մայր Հայրենիք՝ ուսանելու Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում:

1972 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնի օրը, ձեռնադրվում է սարկավագ՝ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանի կողմից: 1975-ին Սասուն աբեղան, հոգևոր ճեմարանի հարկի տակ հաջողությամբ պաշտպանելով իր ավարտաճառը՝ «Ֆրիկի բարոյախրատական բանաստեղծությունները» թեմայով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ մեկնում է Կանադայի Տորոնտո քաղաք՝ տեղի համալսարանում կատարելագործելու իր աստվածաբանական բարձրագույն ուսումը:

Սասուն աբեղան իր գործոն մասնակցությունն է բերել Տորոնտոյի Հայ Եկեղեցու դպրաց դասի և երիտասարդական կազմակերպության գործունեությանը՝ վարելով կանոնական պատասխանատու պաշտոններ: Դասավանդել է տեղի Կիրակնօրյա վարժարանում և հայկական դպրոցում: Մասնակցել է Կանադայի եկեղեցական ընդհանուր ատգամավորական ժողովներին՝ որպես ներկայացուցիչ Հայ Եկեղեցու, եղել է «Հավատք և կարգ» հանձնախմբի անդամ:

1982 թ. սկսբներին ԱՄՆ-ի արևելյան և Կանառաի թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը Սասուն աբեղային վստահեց Տորոնտոյի օրինական երկրորդ ծուխի կազմակերպման պատասխանատու աշխատանքը՝ նշանակելով նրան Նորթ-Եորք հայ համայնքի հոգևոր մատակարար և ծխական խորհրդի նախագահ: Սասուն աբեղան ձեռնհասորեն կազմակերպեց Տորոնտոյի օրինական երկրորդ ծուխը, որը այժմ կոչվում է Վարագա Ս. Խաչ:

Նույն թվականին Սասուն աբեղան Տորոնտոյից տեղափոխվեց Միացյալ Նահանգների Մասաչուսետս նահանգի Բոստոն քաղաք, ուր ընդունվեց Քեմբրիջի «Եպիսկոպոսական Աստվածաբանական Համալսարան»: Հետևելով համալսարանի աստվածա-

բանական եռամյա դասընթացներին, Սասուն աբեղան հաջողությամբ ավարտեց այն 1985 թ.՝ ստանալով «Աստվածաբանության Մագիստրոսի» աստիճան, մասնագիտանալով Ս. Գրոց և հովվական աստվածաբանության մեջ:

Համալսարանում ուսանելու տարիներին, Սասուն աբեղան ծառայել է նախ Ուոթըրթաունի Ս. Հակոբ եկեղեցում և ապա 1984 թ. Հեյվրհիլի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում որպես հոգևոր մատակարար: Շարունակելով իր հասարակական-եկեղեցական գործունեությունը, Սասուն աբեղան Մասաչուսետսի Ուոթըրթաուն և Քեմբրիջ քաղաքներում հիմնել է «Մեսրոպ Մաշտոց» կրթօջախը՝ կազմակերպելով չափահասների համար հայոց լեզվի, ինչպես նաև հայագիտական այլ առարկաների դասընթացների շարքը: Սասուն աբեղայի ջանքերով կրթօջախում ուսանողների թիվը 8-ից հասնում է 65-ի:

1985 թ. Վեհափառ Հայրապետի հրավերով Սասուն աբեղան, տասը տարվա ընդմիջումից հետո, վերադարձավ հայրենիք՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղ հոկտեմբերի 6-ին ԱՄՆ-ի արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչէ արքեպ. Հովսեփյանի ձեռամբ օծվեց կուսակրոն քահանա:

Մայր Աթոռում օրինական-ավանդական քառասունքը անցկացնելուց հետո, Սասուն աբեղան ուղևորվեց ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի կենտրոն Սաքրամենթո, որպես հոգևոր հովիվ Ս. Հակոբ եկեղեցու: